2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ՍՃ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 16. Սյունիքի մարզ - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2024-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 16.12.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br><br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br><br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սննդի (տաք ճաշ) տրամադրման** ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 75 շահառու:
- **Սոցիալական խորհրդատվության տրամադրման** շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 39 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- **Այլ ծառայությունների տրամադրում**.
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 26 շահառուներ մասնակցել են կենտրոնում գործող նկարչական, ձյուղագործության և շաշկիի խմբակներին:
  - Ճաշարանի 61 շահառու մասնակցել են կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝
    - Ծննդյան օրերի նշում,
    - Միջոցառում՝ նվիրված տարեցների օրվան,
    - «Ոսկե աշուն»,
    - Միջոցառում Կապանի երկրագիտական թանգարանում

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

- «Ոչ թե տարեցներ կամ ծերեր , այլ ոսկե սերունդ խորագրով միջոցառում» (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/uiigzv
- Միջոցառում Կապանի Երկրագիտական թանգարանում (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/flcquh),
- Փոքրիկ հատված մեր առօրյայից (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/ezmnly):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Միջքաղաքային տրանսպորտի բացակայության պատճառով շահառուները դժվարությամբ են գալիս ճաշարան:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Կապանի և Սիսիանի մասնաճյուղերի սոցիալական աշխատողները մասնակցել են ՄՍԾՏԿ-ում կայացած համակարգող խորհրդի նիստերին, որտեղ քննարկվել են համայնքի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում չներառված, սակայն աջակցության կարիք ունեցող շահառուների դեպքերը, ինչպես նաև հրատապ օգնության տրամադրման ենթակա դեպքերը:
Մասնակցություն է եղել նաեւ Կապանում կազմակերպված «Բռնի տեղահանված անձանց շրջանում ականներից տուժածների հետ հարցազրույցի վարում, տվյալների հավաքագրում» թեմայով դասընթացին:

Մարզում գործող բոլոր ճաշարանների խոհարարները մասնակցել են «Առողջ սնուցման հիմունքները» մասնագիտական ինտերակտիվ եռօրյա դասընթացին, որը կազմակերպվել էր The holy digital-ի հետ համատեղ:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի

շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 75/75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 34 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 40 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 20 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 9 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 31 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 26 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | 0 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 75 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Միջոցառումների կազմակերպում | 61 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «16» 12.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)